Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՄՆ «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ «Տեխնիկ ծրագրավորողի» որակավորմամբ (406 ժամ) մոդուլների դասախոսական աշխատանքի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Մասնակիցը հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմս, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաև 1-3 գործնական հարցեր և կարող է անձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին:

Հաստատության տվյալ թափուր տեղի մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

Ուսումնական հաստատության դասախոս կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ/:

Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատության տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 01-ից մինչև սեպտեմբերի 12–ը ներառյալ, բացի շաբաթ, կիրակի օրերից, ժամը 10:00-ից մինչև 17:00-ն:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 17-ին, ժամը 12:00 –ին Ալավերդու պետական քոլեջ ՊՈԱԿ -ում :

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարներին +374 32528,+374 32521,+37494284837